

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 ապրիլի 2008 թվականի N 310-Ա

ՈՐՈՓՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈՓՄԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 20-ի N 1540-Ն որոշման 18-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությանը համապատասխան՝ ոռոգման ոլորտի կազմակերպությունների կողմից շահագործվող մի շարք ջրային համակարգերի ամենամյա նորոգումների կատարման, ոռոգման համակարգում հրատապ լուծում պահանջող աշխատանքների իրականացման, ինչպես նաև ոռոգման սեզոնն արդյունավետ կազմակերպելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հաստատել ոռոգման համակարգերի հիմնանորոգման 2008 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով հաստատված ծրագրի 2-րդ գլխում նշված գումարները Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին հատկացվում են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ ներքին տրանսֆերտներ» հոդվածով՝ ծրագրում նախատեսված կազմակերպություններին համապատասխան պայմանագրերի հիման վրա նվիրաբերելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

S. Սարգսյան

2008 թ. ապրիլի 11  
Երևան

**Հավելված**  
**ՀՀ կառավարության 2008 թվականի**  
**ապրիլի 4-ի N 310-Ա որոշման**

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

**2008 ԹՎԱԿԱՆԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ**

(հազ. դրամ)

NN ը/կ	Օբյեկտը շահագործող կազմակեր- պության անվանումը	Օբյեկտի անվանումը	Կատարվելիք աշխատանքների համառոտ բնութագիրը	Ընդա- մենը՝ գումարի չափը	այդ թվում՝		Ակնկալվող արդյունքը
					նախագծանա- խահաշվային փաստա- թղթերի ծեռքբերման և փորձա- քննության արժեքը*	տեխնի- կական վերա- հսկման արժեքը	
1	2	3	4	5	6	7	8
<b>1.</b>		<b>Տարվա ընթացքում իրականացվող աշխատանքները</b>					
1.	«Խոյ» ՋՕԸ	ստորին Հրազդանի II հերթ. 3 <u>ա</u> ճյուղ	Պկ 0+00 - 1+00 ուղղանկյուն պատերով ջրանցքի հատակի բետոնապատում: Պկ 40+00 - 42+00 հատակի բետոնապատում և շեպերի սվաղ: Պկ 42+00 - 52+00 ջրանցքի հատակի բետոնապատում և ե/բ սալիկների կարերի սվաղ: 4 հարթ մետաղական փականի տեղադրում: Նոր Գ-20 ե/բ բլոկների տեղադրում:	14,400.0	2,320.0	216.0	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 9 համայնքի, 6468 ջրօգտագործողի, 128 հա հողատարածքի բնականոն ոռոգումը:
		Ակնալձի վերին ջրանցք	Պկ 3+00 - 46+00 թվով 21 Գ-15 ե/բ բլոկների տեղադրում: Զերմային կարերի սվաղ 2039,0 գծ.մ: Պկ3+ 00 - 46+00 հատակի բետոնապատում: 3x2 չափսերի ե/բ սալիկների ուղղում և տեղադրում:	8,000.0	865.0	120.0	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող Արշալույս համայնքի 1350 ջրօգտագործողի, 265 հա հողատարածքի բնականոն ոռոգումը:
2.	«Ակնալիճ» ՋՕԸ	Ակնալձի ներքին ջրանցք	Պկ 1+00 - Պկ 4+00 «Գ-20» տիպի ե/բ սալերի նորոգում և փոխարինում: Հատակի բետոնապատում: Պատերի սվաղ ցեմենտ-շաղախով 480,0 քմ, հարթ մետաղական փականի նորոգում՝ 8 հատ: Պկ 29+40 - 33+00 և Պկ 75+50 - 79+50 ջրանցքի պատերի բարձրացում:	10,000.0	1,100.0	150.0	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 4 համայնքի, 3313 ջրօգտագործողի, 808 հա հողատարածքի անխափան ոռոգումը:
3.	«Շենիկ» ՋՕԸ	Ռ-4, Ռ-6, Ռ-10, Ռ- 11 Ռ-Կուբան միջտնտեսային բաժանարարներ	Ռ-4 բաժ. և Ռ-6 բաժ. ջրաչափական դիտակետի կառուցում՝ 38 հատ: Ռ-10 բաժ. D=630 մմ, L=100 գծ.մ խողովակի փոխարինում նորով, D=630մմ փականի տեղադրում: Ռ-11 բաժ. Պկ 3+00 - 3+60 ակվեդուկի վերանորոգում: Պկ 4+50 - 4+90 L= 40գծ.մ D=1000 մմ խողովակաշարի տեղադրում: Գ-15 մակնիշի ե/բ բլոկների տեղադրում 36 գծ.մ: 10 հարթ մետաղական փականի տեղադրում: Հեղեղահեռների կառուցում՝ 4 հատ: Ռ-Կուբան Պկ25+00-55+00 ե/բ վաքերի փոխարինում՝ 120 հատ:	20,000.0	3,000.0	300.0	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 5 համայնքի, 971 ջրօգտագործողի, 1607 հա հողատարածքի նորմալ ոռոգումը:

			Ջերմային կարերի սվաղ 304 գծ.մ:				
4.	«Արմավիր» ՋՕԸ	Սևջրի հեռացնող ջրանցք (Մեծամորի պ/կ հեռացնող ջրանցք)	ՊԿ 00+00 - 191+00 առանձին հատվածներում ջրանցքի շեպերի և հատակի բետոնապատում միաձույլ բետոնով: Ջերմային կարերի նորոգում L=945 գծ.մ:	14,000.0	1,600.0	210.0	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 3 համայնքի, 1200 ջրօգտագործողի, 1000 հա հողատարածքի բնականոն ոռոգումը:
		Հացիկի N 10 միջտնտեսային ջրանցք	ՊԿ 00+00 - 20+90 առանձին հատվածներում հատակի և շեպերի բետոնապատում: ՊԿ 20+90 - 55+60 ԼՈ-110 և ԼՈ-80 ե/բ վաքերի ջերմային կարերի սվաղ: ԼՈ-80 ե/բ վաքերի փոխարինում` 20 հատ: Հարթ մետաղական փականների տեղադրում` 5 հատ:	6,000.0	300.0	90.0	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող Հացիկ համայնքի 863 ջրօգտագործողի 663 հա հողատարածքի անխափան ոռոգումը:
5.	«Մուսալեռ» ՋՕԸ	Մուսալեռի (Փարաքարի) ջրանցք	ՊԿ 00+00 - 22+00 առանձին հատվածների շեպերի և հատակի երեսապատում` Մ-150 մակնիշի բետոնով: ՊԿ 22+80 - ՊԿ 27+00 ջրանցքի առանձին հատվածների շեպերի սվաղ ցեմենտ-շաղախով: Ջերմային կարերի սվաղ` 830,0 գծ.մ: 2 հարթ մետաղական փականի տեղադրում:	15,000.0	1,500.0	225.0	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 7 համայնքի, 5973 ջրօգտագործողի, 732 հա հողատարածքի լիարժեք ոռոգումը:
6.	«Քարակերտ» ՋՕԸ	Թալինի մայր ջրանցքի 1-ին հերթի ՄԽ-3 բաժանարար	ՊԿ 0+00 - ՊԿ 89+60 ջրանցքի առանձին հատվածների շեպերի և հատակի բետոնապատում Մ-150 մակնիշի բետոնով, շեպերի բարձրացում: Ջերմային կարերի սվաղ` 1370 գծ.մ:	10,000.0	500.0	150.0	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող Քարակերտ համայնքի 590 ջրօգտագործողի, 183 հա հողատարածքի նորմալ ոռոգումը:
7.	«Արաքս» ՋՕԸ	Բամբակաշատի մ/տ ջրանցք	ՊԿ 0+00 - 58+00 ջրանցքի առանձին հատվածների բետոնապատում: Ջերմային կարերի սվաղ` 3900,0 գծ.մ: Մետաղական հարթ փականի փոխարինում` 2 հատ:	10,000.0	2,000.0	150.0	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 6 համայնքի, 2203 ջրօգտագործողի, 1045 հա հողատարածքի բնականոն ոռոգումը:
8.	«Վաղարշապատ» ՋՕԸ	Շահ-արխ ջրանցք	Ջրանցքի վերականգնում` 800 գծ.մ միաձույլ բետոնով, 4100 գծ.մ Գ-15 բլոկներով:	20,000.0	2,850.0	300.0	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 6 համայնքի, 1965 ջրօգտագործողի, 821 հա հողատարածքի անխափան ոռոգումը:
		Էջմիածնի և թռչնաբուծական ֆաբրիկայի N1 բաժանարար	ԼՈ-40, ԼՈ-60 ե/բ կիսախողովակների տեղադրում L=2400 գծ.մ և L=600 գծ.մ, D=300մմ խողովակաշարի տեղադրում:	20,000.0	1,500.0	300.0	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող Էջմիածին քաղաքի և թ/ֆ-ի 200 ջրօգտագործողի, 185 հա հողատարածքի բնականոն ոռոգումը:
9.	«Ազատ» ՋՕԸ	Արտաշատի ջրանցքի 7c-րդ բաժանարար	L= 2,0 կմ առանձին հատվածներում ԼՈ-80 ե/բ կիսախողովակների հիմնական նորոգում և փոխարինում նորով: Ջերմային կարերի սվաղ` 1260,0 գծ.մ: Բետոնե հենարանների նորոգում:	10,000.0	900.0	150.0	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 4 համայնքի, 550 ջրօգտագործողի, 320 հա հողատարածքի նորմալ ոռոգումը:
10.	«Արարատ» ՋՕԸ	Արարատի ծախ ճյուղ պոմպակայան	D=500մմ, L=2000 գծ.մ երկարությամբ խողովակաշարի փոխարինում:	30,000.0	2,500.0	450.0	Կապահովվի ջրագծի իշխման տակ գտնվող Արարատ համայնքի 500 ջրօգտագործողի, 320 հա հողատարածքի ոռոգումը:
11.	«Մխչյան» ՋՕԸ	Մխչյանի հեռացնող ջրանցք	L=17,4 կմ երկարությամբ ջրանցքի շեպերի և հատակի երեսապատում Մ-150 մակնիշի	25,000.0	4,000.0	375.0	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 16 համայնքի, 8943

			բետոնով ու հիդրոկառուցվածքների նորոգում: Ջերմային կարերի սվաղ՝ 4867,0 գծ.մ: Մետաղական հարթ փականի նորոգում՝ 5 հատ:				ջրօգտագործողի, 2237 հա հողատարածքի լիարժեք ոռոգումը:
12.	«Մասիս» ՋՕԸ	Սայաթ-Նովա-Արբաթ ջրանցքների գլխամասային պատվարային հանգույց	Պատվարային հանգույցի էլ. մեխ. սարքավորումների վերականգնում, պատվարի հիմնանորոգում:	20,000.0	1,500.0	300.0	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 7 համայնքի, 4939 ջրօգտագործողի, 715 հա հողատարածքի նորմալ ոռոգումը:
13.	«Վեդի» ՋՕԸ	Վեդի N 1 ջ/կ	2016 պոմպի նորոգում՝ 2 հատ: ԴՈՒ տիպի 5 փականի նորոգում: D=630 մմ, L=600գծ.մ մղման խողովակաշարի նորոգում: 100,0 գծ.մ մալուխի փոխարինում : Պ/Կ շենքի ներքին և արտաքին հարդարման աշխատանքներ:	34,000.0	1,700.0	510.0	Կապահովվի պոմպակայանի իշխման տակ գտնվող քաղ. Վեդու 1130 ջրօգտագործողի, 488 հա հողատարածքի բնականոն ոռոգումը:
14.	«Շամիրամ» ՋՕԸ	Կոշի ճյուղի ջրանցք	Ջրանցքի շեպերի և հատակի երեսապատում Մ-150 մակնիշի բետոնով, L=5,0 կմ: Ջերմային կարերի նորոգում:	35,000.0	2,500.0	525.0	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 4 համայնքի, 1100 ջրօգտագործողի, 1227 հա հողատարածքի լիարժեք ոռոգումը:
15.	«Աշտարակ» ՋՕԸ	Քասախ-Էջմիածին ջրանցք	Ջրանցքի շեպերի և հատակի երեսապատում բետոնով, մետաղական խողովակների փոխարինում, LՈ-80 ե/բ վաբերի փոխարինում, ե/բ սալերի երեսապատում, մետաղական հարթ փականների նորոգում, ջրաչափական դիտակետերի կառուցում, գլխամասային կառույցի նորոգում:	24,000.0	2,232.5	360.0	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 3 համայնքի, 987 ջրօգտագործողի, 387 հա հողատարածքի բնականոն ոռոգումը:
16.	«Ամբերդ» ՋՕԸ	Ամբերդի ջրանցքի գլխամաս	D=500մմ, L=5.0կմ ազբոցեմենտ խողովակաշարի առանձին հատվածների փոխարինում մետաղականով և մետաղական հարթ փականների վերականգնում:	10,000.0	500.0	150.0	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 6 համայնքի, 2000 ջրօգտագործողի, 1000 հա հողատարածքի լիարժեք ոռոգումը:
17.	«Մուշ» ՋՕԸ	Կաքավաձոր, Դավթաշեն, Ն. Սասունաշեն, Վ. Սասնաշեն, Ագարակ, Ն. Բազմաբերդ, Վ. Բազմաբերդ, Իրինդ և Ջովասար ջրամբարների մոտեցնող ջրանցքներ	Ջրամբարների մոտեցնող ջրանցքների հունների ուղղորդում և նորոգում: Հիդրոտեխնիկական կառուցվածքների նորոգում (կամրջակներ, հարթ մետաղական փականներ, մետաղական կոնստրուկցիաներ):	10,344.0	1,017.2	155.2	Կապահովվի մոտեցնող ջրանցքների իշխման տակ գտնվող 9 համայնքի, 2128 ջրօգտագործողի, 512 հա հողատարածքի անխափան ոռոգումը:
18.	«Քասախ» ՋՕԸ	ՔՈՀ-ի աջափնյա և ձախափնյա ջրանցքներ	Ջրանցքի շեպերի և հատակի երեսապատում Մ-150 մակնիշի բետոնով, կարերի սվաղ ցեմենտ-շաղախով, ջրանցքի պատերի սվաղ, ջրթող հարթ փականների նորոգում, ջրաչափական դիտակետերի (ծագարածև) կառուցում-կարերի սվաղ:	15,000.0	3,000.0	225.0	Կապահովվի ջրանցքների իշխման տակ գտնվող 8 համայնքի, 2200 ջրօգտագործողի, 2268 հա հողատարածքի նորմալ ոռոգումը:
19.	«Ապարան-Արագած» ՋՕԸ	Երնջատափի մայր ջրատարի և գլխամասային հանգույցներ	Ջրանցքի շեպերի և հատակի երեսապատում Մ-150 մակնիշի բետոնով, կարերի սվաղ ցեմենտ-շաղախով, ջրանցքի պատերի սվաղ, ջրթող հարթ փականների նորոգում,	10,000.0	825.0	150.0	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 4 համայնքի, 1200 ջրօգտագործողի, 890 հա հողատարածքի բնականոն ոռոգումը:

			ջրաչափական դիտակետերի (ծագարածև) կառուցում-կարերի սվաղ:				
20.	«Աջափնյակ-ոռոգում» ԶՕԸ	Կապսի ջրանցք	ՊԿ 0+00 - 160+00 հատակի և շեպերի բետոնապատում: L=3,5 կմ, D=700,0 գծ.մ ընդհանուր երկարության դյուկերների վերանորոգում: Ե/բ ԼՌ-40 մակնիշի վաքերի տեղադրում L=3,0 կմ երկարության վրա:	30,000.0	4,300.0	450.0	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 6 համայնքի, 1384 ջրօգտագործողի, 1034 հա հողատարածքի նորմալ ոռոգումը:
21.	«Արագածոռոգում» ԶՕԸ	Հոռոմի ջրանցք	Ջրանցքի բաց հատվածի շեպերի և հատակի երեսապատում բետոնով և D=420մմ, L=1000գծ.մ փակ հատվածի խողովակների փոխարինում: 7 մետաղական հարթ փականի տեղադրում: Ջերմային կարերի նորոգում՝ 160,0 գծ.մ:	10,000.0	1,250.0	150.0	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 4 համայնքի, 396 ջրօգտագործողի, 584 հա հողատարածքի լիարժեք ոռոգումը:
		Ղարանդուի աջափնյա ջրանցք	Ջրանցքի շեպերի և հատակի երեսապատում Մ-150 մակնիշի բետոնով, կարերի սվաղ ցեմենտ-շաղախով, ջրանցքի պատերի սվաղ, ջրթող հարթ փականների նորոգում:	17,400.0	870.0	261.0	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 8 համայնքի, 895 ջրօգտագործողի, 1156 հա հողատարածքի բնականոն ոռոգումը:
22.	«Վարդենիս» ԶՕԸ	Մասրիկի ջրանցք	ՊԿ 2+50 - 9+20 առանձին հատվածներում ջրանցքի հատակի և շեպերի երեսապատում Մ-150 մակնիշի բետոնով: 6 մետաղական փականի նորոգում:	10,000.0	1,500.0	150.0	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 6 համայնքի, 1500 ջրօգտագործողի, 670 հա հողատարածքի լիարժեք ոռոգումը:
23.	«Կոտայք» ԶՕԸ	Կոտայքի մայր ջրանցք, My-2 միջտնտ. բաժ.	Ջրանցքի շեպերի և հատակի երեսապատում բետոնով, հիդրոտեխնիկական կառուցվածքների հիմնական նորոգում, մետաղական խողովակների փոխարինում:	4,500.0	2,225.0	67.5	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 3 համայնքի, 950 ջրօգտագործողի, 325 հա հողատարածքի բնականոն ոռոգումը:
		Նուռնուսի դյուկեր	Դյուկերի 1180 գծ.մ երկարության և 1200 մմ տրամագծով խողովակաշարի ու բետոնային հենարանների վերանորոգում: Նստվածքային հատվածների վերականգնում (բետոնապատում):	49,000.0	4,316.1	735.0	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 21 համայնքի, 9122 ջրօգտագործողի, 4776 հա հողատարածքի նորմալ ոռոգումը:
24.	«Նաիրի» ԶՕԸ	Նաիրիի դոտացիոն ջրանցք	L=5,8 կմ D=1200 մմ մետաղական խողովակաշարի և հենարանների հիմնական նորոգում: ՊԿ 72+55 - 97+10 «Գ-15» մակնիշի Ե/բ բլուկերի ուղղում, հատակի բետոնապատում և ջերմային կարերի նորոգում 618,0 գծ.մ: ՊԿ 104+70 - 162+00 առանձին հատվածներում ջրանցքի շեպերի և հատակի բետոնապատում	16,391.0	2,819.6	245.9	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 11 համայնքի, 6027 ջրօգտագործողի, 1154 հա հողատարածքի լիարժեք ոռոգումը:
25.	«Հրազդան-Ջուր» ԶՕԸ	Ալափարսի N 2 ջրանցք	L=2000 գծ.մ ԼՌ-80 Ե/բ կիսախողովակների տեղադրում, ջրանցքի հատակի և շեպերի երեսապատում բետոնով, կարերի սվաղ:	10,000.0	1,000.0	150.0	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 3 համայնքի, 570 ջրօգտագործողի, 630 հա հողատարածքի անխափան ոռոգումը:
26.	«Գառնի-Գեղարդ» ԶՕԸ	Գառնու ջրանցքի և գլխամասային հանգույց	Ջրանցքի շեպերի և հատակի բետոնապատում Մ-150 մակնիշի բետոնով, մետաղական հարթ փականների նորոգում:	12,000.0	1,300.0	180.0	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող Գառնի համայնքի 1900 ջրօգտագործողի, 800 հա հողատարածքի լիարժեք ոռոգումը:
27.	«Իջևան» ԶՕԸ	Խաչթառակի ջրանցքի	Հեղեղների հետևանքով ամբողջովին քանդվել և քշվել է	35,000.0	1,750.0	525.0	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 5

		գլխամասային հանգույց	ջրանցքի գլխամասային ջրթափային պատվարը՝ 20,0 մ երկարությամբ: Ջրթափային պատվարի վերականգնում:				համայնքի, 641 ջրօգտագործողի, 314 հա հողատարածքի բնականոն ոռոգումը:
28.	«Նոյեմբերյան» ՋՕԸ	Դեբեդավանի ջրանցք	Բետոնային աշխատանքներ, ե/բ վաքերի ուղղում և փոխարինում նորերով, կարերի սվաղ ցեմենտ-շաղախով, 7 հարթ մետաղական փականի տեղադրում:	23,000.0	2,271.3	345.0	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 3 համայնքի, 300 ջրօգտագործողի, 226 հա հողատարածքի լիարժեք ոռոգումը:
29.	«Որոտան» ՋՕԸ	Որոտանի մայր ջրանցք	ՊԿ 177+33 - 208+19 հատվածում, 3x1,5 ե/բ սալիկների ուղղում և տեղադրում 558 հատ: Ջրանցքի շեպերի և հատակի բետոնապատում 335 խմ: Ջերմային կարերի սվաղ 1674 գծ.մ: 8 ջրաչափական դիտակետի կառուցում:	17,330.0	3,026.6	260.0	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 11 համայնքի, 2100 ջրօգտագործողի, 1400 հա հողատարածքի բնականոն ոռոգումը:
30.	«Երևան» ՋՕԸ	Նորքի ջրանցք	L=1500 գծ.մ D=300 մմ տրամագծով մետաղական խողովակաշարի նորոգում առանձին հատվածներում: Կոմպենսատորների և 3 մետաղական հարթ փականի տեղադրում: ՊԿ 0+00 - 38+00 առանձին հատվածներում բետոնի տեղադրում հատակում, շեպերի սվաղ, ջերմային կարերի նորոգում:	13,150.0	1,307.5	197.3	Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող քաղաքապետարանի 18 կազմակերպությունների հողատարածքների ոռոգումը:
<b>Ընդամենը՝ ՋՕԸ-ներ</b>				<b>618,515.0</b>	<b>66,145.8</b>	<b>9,277.7</b>	
31.	«Սևան-Հրազդանյան-ջրառ» ՓԲԸ	Արտաշատի մայր ջրանցք	Քաղաքային դյուկերի հիմնանորոգում և մաքրում:	32,000.0	1,600.0	480.0	«Արտաշատ», «Վեդի», «Ագատ» ՋՕԸ-ներին մատակարարվող ինքնահոս ջրի բարելավում:
		Ագատի ջրամբար	Ջրաչափական դիտակետի կառուցում:	8,000.0	400.0	120.0	Համապատասխան ՋՕԸ-ներին մատակարարվող ոռոգման ջրի հաշվառման բարելավում:
		Ռանչպարի 1-ին և 2-րդ աստիճանի պ/կ	Տանիքի նորոգում:	12,800.0	640.0	192.0	Շենքի տանիքի և պատերի հիդրոտեխնիկական և էլեկտրամեխանիկական սարքավորումները քայքայումից պաշտպանում և անվտանգ շահագործում:
	Մխչյանի 1-ին աստիճանի պ/կ	Տանիքի նորոգում:	12,244.9	612.2	183.7	Շենքի տանիքի և պատերի հիդրոտեխնիկական և էլեկտրամեխանիկական սարքավորումները քայքայումից պաշտպանում և անվտանգ շահագործում:	
<b>Ընդամենը՝ «Սևան-Հրազդանյան-ջրառ» ՓԲԸ</b>				<b>65,044.9</b>	<b>3,252.2</b>	<b>975.7</b>	
32.	«Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ	Կառնուտի ջրամբարը սնուցող ջրանցք	Ջրանցքի շեպերի և հատակի քայքայված բետոնի վերականգնում:	22,528.4	1,126.4	337.9	Ֆիլտրացիոն ելքերի նվազեցում:
		Շիրակի մայր ջրանցք	Ջրանցքի շեպերի և հատակի քայքայված բետոնի վերականգնում:	15,557.5	777.9	233.4	Ֆիլտրացիոն ելքերի նվազեցում:
<b>Ընդամենը՝ «Ախուրյան-Արաքս-ջրառ»</b>				<b>38,085.9</b>	<b>1,904.3</b>	<b>571.3</b>	

ՓԲԸ							
33.	«Դեբեդ-Աղստեղ-Ջրամ» ՓԲԸ	Արձիս-Շնող ջ/կ-ի մոտեցնող ջրանցք	Հատակի կողային հատվածների բետոնացում և մետաղյա հարթ փականների նորոգում:	4,096.4	204.8	61.4	Ֆիլտրացիայի և հարթ փականներից ջրի կորուստների վերացման արդյունքում ջրանցքի ձախ կողմի հողային պատնեշի փլուզման կանխարգելում, ջ/կ-ների աշխատանքի կայունացում:
		Զեյթունի ջ/կ մոտեցնող ջրանցք	Հատակի բետոնացում, գլխամասային փականների և ուժային սարքավորումների նորոգում:	5,672.9	283.6	85.1	Անխափան ջրամատակարարման ապահովում:
		Բերդավանի N 1 ջ/կ	Պոմպերի, էլ.շարժիչների, էլ.ուժային սարքավորումների, ճնշումային խողովակաշարերի նորոգում:	4,817.4	240.9	72.3	120 հա հողատարածքի ոռոգման արդյունքում կտնտեսվի զգալի քանակությամբ էլ.էներգիա, կբարձրանա պ/կ-ի ՕԳԳ-ն:
		Բերդավանի N 2 ջ/կ	Պոմպի, ճնշումային խողովակաշարի, էլ.սարքավորումների, փականների նորոգում:	4,725.3	236.3	70.9	Մատակարարվող ջրի քանակի ավելացման արդյունքում կորոզվի 30 հա անջրդի նոր հողատարածք, կնվազի ջրի կորուստը և կտնտեսվի էլ.էներգիան:
		Ճոճկանի N 1 ջ/կ	Պոմպերի, ընդունող ավազանի, փականների, ճնշումային խողովակաշարի բետոնե հենարանների նորոգում:	7,537.8	376.9	113.1	Մատակարարվող ջրի քանակի ավելացման արդյունքում կորոզվի 40 հա անջրդի նոր հողատարածք, կնվազի ջրի կորուստը և կտնտեսվի էլ.էներգիան:
<b>Ընդամենը՝ «Դեբեդ-Աղստեղ-Ջրամ» ՓԲԸ</b>				<b>26,849.9</b>	<b>1,342.5</b>	<b>402.7</b>	
34.	«Մելիորացիա» ՓԲԸ	Կոլեկտոր 5	5-րդ կոլեկտորի մաքրման և նորոգման աշխատանքներ:	11,020.5	551.0	165.3	Կոլեկտորի համակարգի տակ ընկած չորացվող հողատարածքներից ջրընդունիչ դրենաժային ջրերի անարգել հեռացման ապահովում:
		Կոլեկտոր 6	6-րդ կոլեկտորի մաքրման և նորոգման աշխատանքներ:	8,941.2	447.1	134.1	Կոլեկտորի համակարգի տակ ընկած չորացվող հողատարածքներից ջրընդունիչ դրենաժային ջրերի անարգել հեռացման ապահովում:
		Կոլեկտոր 2 (Նորամարգ)	Նորամարգի 2-րդ կոլեկտորի մաքրման և նորոգման աշխատանքներ:	5,793.4	289.7	86.9	Կոլեկտորի համակարգի տակ ընկած չորացվող հողատարածքներից ջրընդունիչ դրենաժային ջրերի անարգել հեռացման ապահովում:
		Արգավանդի կոլեկտոր	Արգավանդի կոլեկտորի մաքրման և նորոգման աշխատանքներ:	14,254.2	712.7	213.8	Կոլեկտորի համակարգի տակ ընկած չորացվող հողատարածքներից ջրընդունիչ դրենաժային ջրերի անարգել հեռացման ապահովում:

		Քուռի-Արաքսի կոլեկտոր	Քուռի-Արաքսի կոլեկտորի մաքրման և նորոգման աշխատանքներ:	14,943.8	747.2	224.2	Կոլեկտորի համակարգի տակ ընկած չորացվող հողատարածքներից ջրընդունիչ դրենաժային ջրերի անարգել հեռացման ապահովում:
<b>Ընդամենը՝ «Մելիորացիա» ՓԲԸ</b>				<b>54,953.1</b>	<b>2,747.7</b>	<b>824.3</b>	
<b>Ընդամենը 1.</b>				<b>803,448.8</b>	<b>75,392.5</b>	<b>12,051.7</b>	
<b>2.</b>		<b>Ոռգման համակարգում հրատապ լուծում պահանջող աշխատանքների</b>					
1.	«Սևջուր-Ալթթամար» ՋՕԸ	Զարթոնքի պ/կ	Պոմպակայանի շենքի (1500 ք.մ.) տանիքի վերանորոգում:	12,000.0			Կապահովվի պոմպակայանի էլեկտրատեխնիկական սարքավորումների անխափան աշխատանքը:
2.	«Արմավիր» ՋՕԸ	վարչական շենքի կառուցում	Ընկերությունը չունի գրասենյակային պայմաններ:	18,160.2			Ընկերությունը չունի վարչական շենք: Վարձակալական հիմունքներով գրադեցնում է երկհարկանի շենք: Վարչական շենքի կառուցմամբ կապահովվի ինժեներատեխնիկական անձնակազմի բնականոն աշխատանքը:
3.	«Մերձափնյա» ՋՕԸ	Տանձուտի ջրանցք	ՊԿ 135+00 - 144+00 հատվածի հատակի և շեպերի երեսապատում Ս-150 բետոնով: Գ-15 մակնիշի ե/բ բլոկների ուղղում՝ 10 հատ: Ջերմային կարերի սվաղ L= 150 գծ.մ:	4,000.0			Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 4 համայնքի, 2600 ջրօգտագործողի, 1198 հա հողատարածքի բնականոն ոռոգումը:
4.	«Արաքս» ՋՕԸ	անտառի ջ/կ	Էլ. և հիդրոմեխանիկական սարքավորումների ձեռքբերում, d=250մմ, L=2,5 կմ մղման խողովակաշարի առանձին հատվածների փոխարինում, գծերի, ցածր լարման վահանակի ձեռքբերում: Պ/Կ-ի շենքի ներքին և արտաքին հարդարման աշխատանքներ:	9,000.0			Կապահովվի պոմպակայանի իշխման տակ գտնվող 3 համայնքի, 510 ջրօգտագործողի, 65 հա հողատարածքի լիարժեք ոռոգումը:
5.	«Շիրոռոգում» ՋՕԸ	Շիրակի ջրանցքի N 23 բաժանարար (Սավինազի ջրանցք)	4,6 կմ առանձին հատվածներում շեպերի և հատակի բետոնապատում՝ քանդելով քայքայված բետոնը	7,000.0			Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 3 համայնքի, 480 ջրօգտագործողի, 630 հա հողատարածքի ոռոգումը:
6.	«Այգաբացրոգում» ՋՕԸ	Այգաբացի ջրանցք	ՊԿ 0+70 - 43+00 առանձին հատվածներում հատակի և շեպերի բետոնապատում	6,560.0			Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 9 համայնքի, 1500 ջրօգտագործողի, 780 հա հողատարածքի նորմալ ոռոգումը:
		բաժանարար -26	ՊԿ 86+00 զլխամասային ջրընդունիչ ավազանի կառուցում: Առանձին հատվածներում ջրանցքի հատակի և շեպերի բետոնապատում: Մետաղական հարթ փականի տեղադրում՝ 2 հատ:	5,650.0			Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 5 համայնքի, 1200 ջրօգտագործողի, 1430 հա հողատարածքի անխափան ոռոգումը:



		վարչական շենք	կիսակառույց երկհարկանի շենքի հիմնանորոգում	12,500.0		Ընկերությունը վարձակալական հիմունքներով զբաղեցնում է 4 սենյակից բաղկացած բնակելի տարածք: Հատկացված 2 հարկանի շենքի նորոգմամբ կստեղծվի նորմալ աշխատանքային պայմաններ:
7.	«Գետիկ» ՋՕԸ	Գեղասարի ջրանցք	ՊԿ 0+00 - 57+40 ջրանցքի առանձին հատվածների շեպերի և հատակի երեսապատում Մ-150 մակնիշի բետոնով: Կարերի սվաղ` ցեմենտ-շաղախով: Հիդրոտեխնիկական կառուցվածքների (հարթ փական, D=600 մմ դյուկերի, հեղեղահեռ, կամուրջ) վերանորոգում:	7,500.0		Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 2 համայնքի, 556 ջրօգտագործողի, 111 հա հողատարածքի բնականոն ոռոգումը:
		Ջրաշենի պոմպակայան	ՑՆ 400-210 պոմպի վերանորոգում` 2 հատ: 320 կվտ, էլ. շարժիչի նորոգում` 2 հատ: էլ.սարքավորումների նորոգում և տեղադրում, կարգաբերում:	4,000.0		Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 2 համայնքի, 864 ջրօգտագործողի, 140 հա հողատարածքի անխափան ոռոգումը:
8.	«Լոռու ջրանցք» ՋՕԸ	Լոռու ջրանցքի դյուկեր	ՊԿ154+60 - 156+13 հատվածի L=153,0 գծ.մ երկարությամբ Լոռու ջրանցքի դյուկերի և Ե/բ հենասյուների նորոգում: Մուտքամասի և ելքամասի ավազանների վերանորոգում:	6,000.0		Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 14 համայնքի, 2500 ջրօգտագործողի, 4500 հա հողատարածքի լիարժեք ոռոգումը:
		Յաղդանի դյուկեր	L=810,0 գծմ, Պ=1400մմ մետաղական խողովակի առանձին հատվածների վերանորոգում, գաբյունային շարվածք, կամրջի հենապատերի վերանորոգում, կոմպենսատորների և հենարանների վերանորոգում:	13,000.0		Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 12 համայնքի, 2100 ջրօգտագործողի, 4000 հա հողատարածքի բնականոն ոռոգումը:
9.	«Գավառ» ՋՕԸ	Սարուխանի ջ/կ-ի մոտեցնող ջրանցքներ	Մոտեցնող ջրանցք` L=480,0 գծ.մ: ՊԿ 0+00 - 4+80 առանձին հատվածներում ջրանցքի հատակի երեսապատում բետոնով: L=192 գծ.մ ջերմային կարերի նորոգում: Ջրանցքի հատակի առանձին հատվածների և շեպերի նորոգում:	10,000.0		Կապահովվի պոմպակայանի իշխման տակ գտնվող Սարուխան համայնքի 1530 ջրօգտագործողի 130 հա հողատարածքի բնականոն ոռոգումը:
10.	«Մարտունի» ՋՕԸ	Երանոսի, Ջոլաքարի, Մարտունու և Աստղածորի պ/կ-ներ	Ձմռան ամիսների ընթացքում Սևանա լճի մակարդակի աննախադեպ (մինչև 60 սմ) բարձրացման հետևանքով ջրածածկվել են Երանոսի և Ջոլաքարի պ/կների երկրորդ աստիճանում տեղադրված սարքավորումներն ու առաջին աստիճանի պ/կ-ների մոտեցնող ճանապարհները: Ջրածածկվել է Մարտունու առաջին աստիճանի պ/կ-ը և այն անհրաժեշտ է տեղափոխել դեպի ափ` 200 գծամետրով: Աստղածորի առաջին աստ. պ/կ-ի մոտեցնող ճանապարհը 120 գծամետր բարձրացնել 0.7 մ:	31,000.0		Կապահովվի պոմպակայանների իշխման տակ գտնվող համայնքների 4000 ջրօգտագործողի 950 հա հողատարածքի բնականոն ոռոգումը:

		դուտացիոն ջրանցք	Ջրանցքի հատակի և շեպերի երեսապատում բետոնով, ջրթող հարթ մետաղական փականների նորոգում, սվալ ցեմենտ-շաղախով և շահագործման ճանապարհի նորոգում:	7,650.0			Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող Այգեհովիտ համայնքի 550 ջրօգտագործողի 240 հա հողատարածքի նորմալ ոռոգումը:
11.	«Զրվեժ-Չորաղբյուր» ՋՕԸ	Ազատի IV-րդ աստիճ. Ռ-1 բաժ.	Դ=219 մմ, L=840 գծ.մ մետաղական խողովակաշարի առանձին հատվածների փոխարինում:	6,000.0			Կապահովվի բաժանարարի իշխման տակ գտնվող 700 այգեգործի 50 հա հողատարածքի նորմալ ոռոգումը:
		Ջովքի խ/հ-ի մղման խողովակաշար	Դ=219 մմ, L=700 գծ.մ մետաղական խողովակաշարի առանձին հատվածների փոխարինում:	5,000.0			Կապահովվի խողովակաշարի իշխման տակ գտնվող 750 այգեգործի 53 հա հողատարածքի բնականոն ոռոգումը:
		վարչական շենքի կառուցում	Ընկերությունը չունի վարչական շենք:	18,000.0			Ընկերությունը չունի վարչական շենք: Աշխատողները տեղավորված են վագոն- տնակներում: Չկան աշխատանքային տարրական պայմաններ: Անհրաժեշտություն է առաջացել կառուցելու նոր վարչական շենք:
12.	«Հրազդան-Ջուր» ՋՕԸ	այգեգործական ընկերության բաժանարար	d=300 մմ տրամագծով մետաղական խողովակների փոխարինում L=222 գծ.մ:	3,500.0			Կապահովվի ջրատարի իշխման տակ գտնվող 350 ջրօգտագործողի 164 հա հողատարածքի անխափան ոռոգումը:
13.	«Նաիրի» ՋՕԸ	վարչական շենքի կառուցում	Ընկերությունը չունի վարչական շենք:	18,000.0			Ընկերությունը վարձակալական հիմունքներով զբաղեցնում է 4 սենյակից բաղկացած բնակելի տարածք: Չկան աշխատանքային նորմալ պայմաններ: Վարչական շենքի կառուցմամբ կբարելավվի վարչական անձնակազմի նորմալ գործունեությունը:
14.	«Եղվարդ» ՋՕԸ	վարչական շենք	Վարչական շենքի տանիքի նորոգում, 2-րդ հարկի պատուհանների փոխարինում նորով:	2,670.0			Վարչական շենքի տանիքը երկար տարիներ չնորոգվելու պատճառով քայքայվել է: Անհրաժեշտություն է առաջացել այն նորոգել:
		Արզնի ճյուղ ջրանցք	ՊԿ 0+00 - 120+00 առանձին հատվածներում ե/բ սալերի նորոգում և ուղղում: Ջրանցքի շեպերի և հատակի բետոնապատում՝ Մ-150 մակնիշի բետոնով: Մետաղական հարթ փականների նորոգում: Ջերմային կարերի նորոգում 3500,0 գծ.մ:	10,000.0			Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 6 համայնքի, 5801 ջրօգտագործողի, 1110 հա հողատարածքի լիարժեք ոռոգումը:
15.	«Վայք» ՋՕԸ	Վայքի ջրատար	ՊԿ 0+00 - 56+00 առանձին հատվածների հատակի և շեպերի երեսապատում, շեպերի և հատակի բետոնապատում, 3x1.5 չափսի	15,000.0			Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող Վայք քաղաքի 450 ջրօգտագործողի, 44,5 հա հողատարածքի

			Ե/բ սալերի ուղղում և ջերմային կարերի նորոգում:			անխափան ոռոգումը:
16.	«Եղեգնաձոր» ՋՕԸ	Ռինդի ջրանցք	ՊԿ 19+20 - 25+40 առանձին հատվածներում ջրանցքի հատակի և շեփերի երեսապատում Մ-150 մակնիշի բետոնով: 4 հարթ մետաղական փականի փոխարինում:	10,000.0		Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 4 համայնքի, 618 ջրօգտագործողի, 570 հա հողատարածքի բնականոն ոռոգումը:
		Գետափ-Աղավնաձոր պ/կ Արփիի ճյուղ	Ջրանցքի հատակի և շեփերի երեսապատում Մ-150 մակնիշի բետոնով: 5 հարթ մետաղական փականի փոխարինում: ՊԿ 1+60-7+81 հատվածի Ե/բ երեսապատման սալերի ուղղում: L 621 գծ.մ ջերմային կարերի նորոգում:	6,000.0		Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 3 համայնքի, 198 ջրօգտագործողի, 118 հա հողատարածքի բնականոն ոռոգումը:
		Գետափ-Եղեգնաձոր ջրանցք	LՈ-80 և LՈ-60 վաքերի փոխարինում նորով, հողային առանձին հատվածների երեսապատում Մ-150 մակնիշի բետոնով: ՊԿ 16+50-27+70 վաքերի ուղղում և կարերի նորոգում:	8,000.0		Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 2 համայնքի, 280 ջրօգտագործողի, 160 հա հողատարածքի նորմալ ոռոգումը:
		Վայոց ձորի ինքնահոս ոռոգման համակարգի «Արենիի դեբր»	LՈ-40 Ե/բ կիսախողովակների տեղադրում L=1,2 կմ: Բետոնե հենարանների կառուցում: 2 հարթ փականի տեղադրում: Ջերմային կարերի սվաղ: D=165 գծ.մ խողովակների տեղադրում և բիտումային մեկուսացում:	10,000.0		Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող Արենի համայնքի 70 ջրօգտագործողի, 35 հա հողատարածքի նորմալ ոռոգումը:
17.	«Բերդ» ՋՕԸ	Պառավաքարի վերին ջրանցք	LՈ -80 կիսախողովակների ուղղում L=4,5 կմ: Նոր LՈ-80 վաքի տեղադրում՝ 10 հատ: Ջերմային կարերի սվաղ՝ 1600,0 գծ.մ: Մետաղական հարթ փականի նորոգում՝ 5 հատ:	5,000.0		Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 3 համայնքի, 925 ջրօգտագործողի, 250 հա հողատարածքի բնականոն ոռոգումը:
18.	«Խնձորուտ» ՋՕԸ	Խնձորուտի պոմպակայանի մղման խողովակաշարի աջ և ձախ ճյուղեր	Դ=530մ մետաղական խողովակաշարի տեղադրում L=120,0 գծ.մ: 19 կոմպենսատորի նորոգում: Միջանկյալ և խարսխային հենարանների կառուցում:	8,000.0		Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 5 համայնքի, 840 ջրօգտագործողի, 2300 հա հողատարածքի նորմալ ոռոգումը:
19.	«Մեղրի» ՋՕԸ	15 պոմպակայանի և 1 խ/հ-ի նորոգում	Արաքս-1; 2, Կարճևան-1, Մեղրի-1;2, Ավանք-1;2, Ավանք1-1, Շվանիձոր-1;2, Շահաձոր, Նյուվաղի1;2;3, Բուղդաղուզ պ/կ-ներ և Ագարակի խ/հ:	35,456.3		Կապահովվի պոմպակայանների իշխման տակ գտնվող 7 համայնքի, 1723 ջրօգտագործողի, 403 հա հողատարածքի բնականոն ոռոգումը:
20.	«Որոտան» ՋՕԸ	Որոտանի մայր ջրանցքի դյուկեր	ՊԿ 23+07 Դ=1120մմ, L=7գծ.մ դյուկերի վթարված հատվածի վերանորոգում, անկեռային հենարանի և կոմպենսատորի նորոգում:	4,170.0		Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 11 համայնքի 2100 ջրօգտագործողի, 1400 հա հողատարածքի լիարժեք ոռոգումը:
		Շինուհայր-Հալիձոր-Հարժիս պոմպակայան	D=300մմ ԴՈԻ մակնիշի փականի տեղադրում՝ 6 հատ, ՑՆՍ 300/300 պոմպի նորոգում և տեղադրում՝ 2 հատ: Պ/կ-ի շենքի տանիքի նորոգում, 170 քմ և ներքին և արտաքին հարդարման աշխատանքներ:	7,000.0		Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 3 համայնքի 400 ջրօգտագործողի, 475 հա հողատարածքի բնականոն ոռոգումը:
21.	«Տոլորս» ՋՕԸ	զոնալ ձախ ափ ջ/կ	Էլ. և հիդրոմեխ. սարքավորումների նորոգում և փոխարինում:	1,530.0		Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 2 համայնքի 1166 ջրօգտագործողի, 290 հա հողատարածքի նորմալ ոռոգումը:

		Աշոտավանի ջ/կ	ՑՆ 400-210 մակնիշի պոմպի նորոգում՝ 2 հատ: ԴՂԻ մակնիշի 2 փականի նորոգում: 2 տրանսֆորմատորի նորոգում: 3 կոմպենսատորի նորոգում: Պ/Կ-ի շենքի արտաքին: Պ/Կ մոտեցնող ջրանցքի հունի ուղղում և ավերի ամրացում:	7,579.0			Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող Աշոտավանի համայնքի 143 ջրօգտագործողի, 57 հա հողատարածքի բնականոն ոռոգումը:
22.	«Մասիս» ՋՕԸ	Գետափի պոմպակայան	Գետափի պոմպակայանի կառուցում	15,000.0			Կապահովվի Գետափի համայնքի 80 հա հողատարածքի բնականոն ոռոգումը:
23.	«Թալին» ՋՕԸ	Թալինի 1;2, Աշնակի 1;2, Շենիկի և Հացաշենի ջրամբարների մոտեցնող ջրանցքներ	Ջրամբարների մոտեցնող ջրանցքների ուղղորդում և հիդրոտեխնիկական կառուցվածքների նորոգում:	7,000.0			Կապահովվի ջրամբարների իշխման տակ գտնվող 750 հա հողատարածքի ոռոգումը:
		5 պոմպակայանի նորոգում	Շտրեկ, Դաշտաղեն, Սարալանջի 7/1, Արեգի և Թալինի N1 պոմպակայանների էլ. և հիդրոմեխ. սարքավորումների նորոգում և կարգաբերում:	22,000.0			Կապահովվի պոմպակայանների իշխման տակ գտնվող 8 համայնքի, 1430 ջրօգտագործողի, 2350 հա հողատարածքի լիարժեք ոռոգումը:
24.	«Խոյ» ՋՕԸ	վարչական շենքի կառուցում	ընկերությունը չունի գրասենյակային պայմաններ.	18,000.0			Ընկերության վարչական ապարատն իր գործունեությունն իրականացնում է վագոն- տնակներում: Աշխատանքային պայմանները բարելավելու համար անհրաժեշտ է կառուցել վարչական շենք:
25.	«Երևան» ՋՕԸ	Արաբկիրի ջրատար	ՊԿ15+50 - 17+70 հատվածի 630 մմ տրամագծով մետաղական խողովակաշարի և բետոնային հենարանների վերանորոգում: Կոմպենսատորների տեղադրում:	5,000.0			Կապահովվի ջրատարի իշխման տակ գտնվող քաղաքապետարանի 15 կազմակերպության հողատարածքների ոռոգումը:
<b>Ընդամենը՝ ՋՕԸ-ներ</b>				<b>401,925.5</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	
26.	«Սևան Հրազդանյան-ջրառ» ՓԲԸ	Ազատի ջրամբար	ջրամբարի պատվարի անծրևացման համակարգերի կառուցում	10,200.0			Պատվարի անվտանգության ապահովում:
		Արզնի Շամիրամի ջրանցքի 1-ին հերթի	Դիմհարի կառուցում՝ «Եղվարդ» ՋՕԸ-ի սպասարկման տարածքում՝ 4 հատ:	2,700.0			Ոռոգման ջրի մատակարարման բարելավում:
		Ապարանի ջրամբար	1) ջրամբարի թասի հակաֆիլտրացիոն միջոցառումների իրականացում.	12,000.0			Ջրամբարի ջրի կորուստների նվազեցում:
			2) սնուցող ջրանցքի հունի մաքրում և նորոգում:	4,000.0			Ջրամբարի ջրի մուտքի ապահովում:
		Ազատի 1-ին, 2-րդ և 3-րդ աստիճանի պ/կ	Տանիքների մասնակի նորոգում:	5,000.0			Հիդրոտեխնիկական և էլեկտրամեխանիկական սարքավորումների անվտանգ շահագործում:
		Ազատի 4-րդ աստիճանի պ/կ	Խողովակաշարի փոխում D=530 մմ և D=630 մմ L=300 մ, ծառայողական ճանապարհի կառուցում, վագոն տնակի ձեռքբերում:	4,536.6			«Ջրվեժ-Չորաղբյուր» ՋՕԸ-ին անխափան ջրամատակարարման ապահովում:

		Ազատի 1-ին, Մխչյանի 1-ին, Ռանչպար-Արևշատ 2-րդ պոմպակայաններ	Ուժային էլ.սարքավորումների վերանորոգում և ձեռք-բերում (շարժիչներ, տրանսֆորմատորներ և այլն):	12,000.0			Ռոզման ջրի անխափան մատակարարում:
<b>Ընդամենը՝ «Սևան Հրազդանյան ջրառ» ՓԲԸ</b>				<b>50,436.6</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	
27.	«Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ	Սառնաղբյուրի ջրամբարի ջրթող աշտարակ	Ջրթող աշտարակի քայքայված մետաղական պատյանի նորոգում:	4,074.5			Պատվարի անվտանգության ապահովում:
		Թալինի մայր ջրանցքի գլխամասի ավազաորսիչ և թունել	Թունելի պատերի երեսապատում բետոնով, ավազաորսիչի նորոգում:	4,813.2			Ջրանցքի ջրթողունակության ապահովում:
		Ջարթոնք-Մեծամոր պ/կ-ների մոտեցնող ջրանցքների գլխամասերի հիդրոհանգույցներ	Գլխամասի հիդրոհանգույցի հարթ մետաղական փականների նորոգում, ռեդուկտորների տեղադրում:	2,697.3			Ջրամատակարարման ռեժիմների կարգավորում:
		Արփի լճի ջրամբարի պատվարի քարե շարվածք	Պատվարի քարե շարվածքի կարանների ներարկում՝ ցեմենտի շաղախով:	4,038.2			Պատվարի անվտանգության ապահովում:
		Մեծամոր /Սև ջուր պ/կ-ի շարժիչ, տանիք, ճնշման խողովակաշար, պոմպի ռոտոր և հետադարձ փական	630 կվտ, 750 պտ/ր էլ շարժիչի հիմնանորոգում՝ 1 հատ, թիթեյա տանիքի վերանորոգում, 22 ՆԱԴ պոմպի ռոտորի հիմնանորոգում՝ 1 հատ, D=600 մմ հետադարձ փականի հիմնանորոգում կամ փոխարինում՝ 4 հատ:	7,922.2			Ջրամատակարարման անխափան և հուսալի ապահովում, շենքի և ագրեգատների պաշտպանվածության ապահովում, փականների աշխատունակության ապահովում:
		Մեծամոր /Սև ջուր պ/կ-ի D=1220 մմ ճնշման խողովակաշար	1959 թ. գործող D=1220 մմ L=95 մ բարակած պատերով ճնշման խողովակաշարի փոխարինում:	19,347.0			Անխափան ջրամատակարարման ապահովում:
		Ղարաղալա-2 պ/կ-ի տանիք, պոմպի ռոտոր և յուղային անջատիչներ	Պոմպակայանի ագրեգատներից տանիքի փոխարինում, 22 ՆԱԴ պոմպի ռոտորի հիմնանորոգում՝ 1 հատ, յուղային անջատիչների հիմնանորոգում կամ փոխարինում՝ 2 հատ:	10,032.5			Շենքի և ագրեգատների պաշտպանվածության պոմպի ՕԳԳ-ի և էլ. մատակարարման հուսալիության ապահովում:
		Նոր Կեսարիա պ/կ-ի շարժիչ և ուղղահայաց փական	250 կվտ 1500 պտ/ր էլ շարժիչի հիմնանորոգում (1 հատ), D=300 մմ ուղղահայաց փականների հիմնանորոգում կամ փոխարինում (2 հատ):	1,308.0			Ջրամատակարարման հուսալիության ապահովում:
		Ղարաղալա-1, Ախուրիկ-1, Ախուրիկ-4, Բայանդուր-2, Ջրափի-1, Ջրափի-2 պ/կ-ներ	Պոմպերի ռոտորների և շարժիչների հիմնանորոգում:	3,130.0			Պոմպի ՕԳԳ-ի, փականների աշխատունակության և ջրամատակարարման հուսալիության ապահովում:
		վարչական շենք	Ընկերության վարչական շենքի նորոգում և գրասենյակային պայմանների բարելավում:	10,000.0			Վարչական շենքը երկար տարիներ չնորոգվելու պատճառով ամբողջովին քայքայվել է: Գրասենյակային պայմաններ ստեղծելու համար անհրաժեշտություն է առաջացել այն նորոգել:
<b>Ընդամենը՝ «Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ</b>				<b>67,362.9</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	

28.	«Դեբեդ-Աղստու-ջրառ» ՓԲԸ	Արձիս-Շնող ջ/կ	Պոմպերի, էլ.շարժիչների, էլ.ուժային սարքավորումների, ճնշումային խողովակաշարի, փականների նորոգում:	9,133.3			Մատակարարվող ջրի քանակի ավելացման արդյունքում կոռոզվի 70 հա անջրդի նոր հողատարածք, կնվազի ջրի կորուստը և կտնտեսվի էլեկտրաէներգիան:
		Դովեղի ջ/կ	Պոմպերի և էլ.շարժիչների նորոգում:	2,591.1			Մատակարարվող ջրի քանակի ավելացման արդյունքում կոռոզվի 30 հա անջրդի նոր հողատարածք:
		Ճոճկան N 2 ջ/կ	էլ.հաղորդման գծի, էլ.ուժային սարքավորումների, պոմպերի, էլ.շարժիչների, փականների, էլ.դեկավարման սարքավորումների նորոգում:	10,469.4			Մատակարարվող ջրի քանակի ավելացման արդյունքում կոռոզվի 150 հա անջրդի նոր հողատարածք:
		Այրում-Ճոճկան N 1 ջ/կ	Պոմպերի, էլ.շարժիչի, փականների, պ/կ-ի տանիքի նորոգում:	11,725.8			Մատակարարվող ջրի քանակի ավելացման արդյունքում կոռոզվի 100 հա հողատարածք՝ տնտեսելով էլեկտրաէներգիան:
		Բերդավան N 2 ջ/կ	Պոմպակայանի գլխամասային պատվարի կառուցում:	13,000.0			Պատվարի անվտանգության ապահովում:
		Նոյեմբերյանի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, Չեյթուն-Հաղթանակ 1-ին, 2-րդ 3-րդ, Չեյթուն 1, Հաղթանակ 1 ջրհան կայաններ	Պոմպերի և էլ.շարժիչների նորոգում:	7,445.1			Կնվազի 1 խոր.մ ջրի մղման էլ.էներգիայի տեսակարար ծավալը, կավելանա մատակարարվող ջրի քանակը և կոռոզվեն անջրդի նոր հողատարածքներ, կտնտեսվի էլեկտրաէներգիան:
<b>Ընդամենը՝ «Դեբեդ-Աղստու-ջրառ» ՓԲԸ</b>				<b>54,364.7</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	
29.	«Մելիորացիա» ՓԲԸ	Հրազդան-Արաքսի կոլեկտոր (II տեղամաս)	Հրազդան-Արաքսի կոլեկտորի մաքրման և նորոգման աշխատանքներ:	30,366.4			Կոլեկտորի համակարգի տակ ընկած չորացվող հողատարածքներից ջրընդունիչ դրենաժային ջրերի անարգել հեռացման ապահովում:
<b>Ընդամենը՝ 2</b>				<b>604,456.1</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	
<b>Ընդամենը</b>				<b>1,407,904.9</b>	<b>75,392.5</b>	<b>12,051.7</b>	

\* Որոշ օբյեկտների համար նախատեսվում է պատվիրել ավելի մեծ ծավալի նախագծանախահաշվային աշխատանքներ և դրանք իրականացնել շուրջ երեք տարվա ընթացքում:

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Մ. Թովուլյան**